ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՋԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լանջիկ համայնք

ՀՀ, Շիրակի մարզ, գ.Լանջիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈՒՆԻՍԻ 2016թվականի N 9-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԼԱՆՋԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 24-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի և << Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի, <<Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերի դրույթներով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լանջիկ համայնքի ավագանին ո ր ո շ ո ւ մ է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լանջիկ համայնքի ղեկավարի առաջարկությունը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լանջիկ համայնքի ավագանու 2015թվականի դեկտեմբերի 14-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լանջիկ համայնքի 2016թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 24-Ն որոշման մեջ կատարելու հետևյալ փոփոխությունները՝

1.Հողի օտարումից ստացված 800,0 հազ. դրամը ավելացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լանջիկ համայնքի 2016 թվականի ֆոնդային բյուջեի ծախսային մասում:

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լանջիկ համայնքի 2016 թվականի բյուջեի եկամտային մասի 1257 տողի (պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)) 0 թիվը փոխարինել 727,3 թվով: